ԳԱՌՆԱՊԵՏԸ

ԳՐԵՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

Գառն ինչո՞ւ ես յօշոտում,
Ի՞նչ մեղք ունի, բորենի. —
— Գառն ինչո՞ւ է խոտն ուտում՝
Մի՞թէ խոտը մեղք ունի...

* * *

Լոյս բիան մարմար քարէն,
Էն լոյս բիան մարմար քարէն
Տեսնես էլի լոյս կը բիի՞
Էն Մարութա բարձր սարէն...

* * *

Դու Հայոց լեռ իմ Արարատ,
Շղթայուած ձեռ, իմ Արարատ,
Հազարաձեռ քո յոյսը լոկ
Ազգն է անմեռ, իմ Արարատ...

* * *

Յոյսի ուղտը թէ՛ աւազի վրայ է,
Թէ նոր կեանքի ովասիսի վրայ է,
Իմ սիրտն էլ է Մասիսի պէս դեռ դերի՝
Քանզի սիրտս միշտ Մասիսի վրայ է:

* * *

Մեծ ես հոգով, մաքով, երդով,
Բայց թուով էլ դարձիր մեծ,
Որ քեզ փրկես դու քո ձեռքով
Գայիքներում հողմածեծ...

* * *

Կեանքս դերի մնաց դրին,
Գերի մնաց քո երդերին,
Ազգ իմ, սիրտս՝ երգիս մէջ էլ՝
Գերի մնաց քո վէրքերին...

* * *

Ես իշխանն եմ Սեւանի,
Ինձ Սեւանից մի՛ հանի,
Թէ ինձ օտար ծով դցես՝
Ես չեմ մնա կենդանի:

* * *

Այդին դու ես, դուռն էլ դու,
Իմ դրախտի նուռն էլ դու,
Այդեպանն էլ դու ես, վա՜խ,
Սիրտս խրված թուրն էլ դու:

* * *

Էլ ի՞նչ հայ,
Էլ ի՞նչ ազիզ, էլ ի՞նչ հայ,
Երբ չես խօսում հայերէն՝
Էլ ի՞նչ Մասիս, էլ ի՞նչ հայ:

* * *

Սիմ, Սիփան ու Սիս կ՚ուզեմ,
Մարսը ձեզ, Մասիս կ՚ուզեմ, —
Լուսինը թող ձեզ մնայ, —
Արեւը ազգիս կ՚ուզեմ...

* * *

Այնքան հեշտ են բխում երգերս իմ սրտից,
Որ թւում է, թէ բխում են լոկ ստից,
Այնինչ՝ նրանք իմ արիւնով թաթախուած
Ճշմարտութեան հանուած աչքերն են անբիծ:

* * *

Երազիս մէջ Վանայ ծովը, Սասունն ու Վանը տեսայ,
Ապարանջան աղբիւրներս նորից մեր տանը տեսայ,
Ելա Մասիսն համբուրեցի, բայց երբ խինդից զարթնեցի՝
Լացի... քանզի միայն մի բուռ լացող Սեւանը տեսայ:

* * *

Դարս ինձ հետ, ես դարիս հետ խռոված,
Սրտանց սիրած աշխարհիս հետ խռոված՝
Ո՞ւմ հետ կիսեմ անանձնական ցաւերն իմ,
Որպէս մօրս ու եարիս հետ խռոված:

* * *

Թէ սեւ ամպեր, թէ կայծակներ բիւր՝ անցան,
Քո կամուրջով հրեշտակներ լուռ անցան,
Ամուր դրէք՝ զօրաւոր մէջքն Աստծու,
Ո՞վ ծիածան, հաւատներս ո՞ւր անցան...

* * *

Ես եմ միակ խենթ իմաստունն ու անկեղծը իմ դարի,
Սիրտս բացող, իրաւն ասող միակ մեծը իմ դարի,
Ահա ինչո՛ւ միայն ես եմ դահընկէցուած՝ քարկոծուում,
Ես եմ միակ ամենամեծ բանաստեղծը իմ դարի:

* * *

Մարդ կայ կեանքին վարդաստան է, մարդ կայ՝ խար,
Մարդ կայ՝ ազգին վեր կը տանի, մարդ կայ՝ վար,
Վեր տանողիս չատ վար դցեց բախտը կոյր,
Վար տանողին վեր տանելով անդադար...

* * *

Աշխարհացիր ծաղիկներս համբուրում՝
Արազի պէս զոյգ ափերս համբուրում,
Անց եմ կենում պատգամելով՝ հա՛յ կացէք, —
Էլ չեն ահի արցունքներս համբուրում...

* * *

Բոլորը խարում են՝ բոլորից խաբուած,
Բոլորից խաբուեցի ես նորից խաբուած,
Բոլոր բառն, իրաւ է, տեղին չէ, մայր իմ,
Ձկայ մէկն աշխարհում իր մօրից խաբուած:

* * *

Վանայ ծովն է՝ զաղտնի թէ յայտ՝ իմ լացածը՝ Մասիսին,
Հաւատում եմ՝ թէկուզ դիպչի Արագածը Մասիսին,
Հազար տարի յետոյ էլ դեռ, Երուսաղէմն ինձ վկայ,
Պիտի ծաղկի Հայոց դահը, Հայոց հացը Մասիսին...

* * *

Կամ թէ չկամ, ազգեր, մէկ է ձեզ համար,
Այն ինչ՝ կեանքս վշտաբեկ է ձեզ համար,
Ես կ՚ուզէի չլար մայրն էլ ոսոխս,
Այնինչ դաւը կեանքի զէկ է ձեզ համար...

* * *

Ձեռքերը գնում են, հեռքերը մնում,
Վէրքերը գնում են, երգերը մնում,
Խօսքերով խոցուածին բալասան չկայ,
Ձօրքերը գնում են, խօսքերը՝ մնում:

* * *

Ատոմը լոյս, ամէն ինչ է լինելու,
Քանի գնայ՝ կեանքը ջինջ է լինելու, —
— Սիրտ իմ, ջինջը դու երազում կը տեսնես,
Դու վերջն ասա, վերջը ի՞նչ է լինելու...

* * *

Մինքս վշտիս պէս խորունկ է, ի՞նչ ասեմ,
Թէպէտ խորունկ մի ծերուկ է, ի՞նչ ասեմ,
Իմաստուններ, բիւր դարեր էլ յետոյ դաք՝
Աշխարհն էլի հանելուկ է, ի՞նչ ասեմ...

* * *

Ցամաքում է, ետ է քաշւում Սեւանը,
Ետ է քաշւում, սիրտս մաշում Սեւանը,
Ետ քաշուելով՝ շիրմի տեղ է ինձ բացում, —
Զանգուի Թուրն է վրաս քաշում... Սեւանը:

* * *

Որտեղ հայ կայ՝ բերէք սեղմեմ իմ կրծքին,
Թէ պանդուխտ է՝ վիշտը սեղմեմ իմ կրծքին,
Թէ Մասիսն է՝ ինձ Մասիսին կը թաղէք,
Որ յաւիտեան սարս սեղմեմ իմ կրծքին:

* * *

Իմ սխալներն իմ դարինն են, իմը չեն,
Մշտասխալ աշխարհինն են, իմը չեն,
Ինձ ցաւ տալով՝ իմ դարն իրեն միշտ ներեց,
Բախտ ու ծիծաղ միշտ հարինն են, իմը չեն:

* * *

Այնքան նայեց մայրս Հայոց դարերին՝
Հայոց ոտքը դարեր արնող քարերին,
Ա՜խ, ճերմակեց՝ վաղ ճերմակած որդու պէս,
Երբ որ նայեց դերի Մասիս սարերին...

* * *

Առանց հողի՝ դու ո՞ւր պիտի ծաւալուես,
Այս նոր կեանքի արեւում էլ կը վառուես,
Ա՜խ, կը վառուես, թէ մի–երկու ծառ մնաս, —
Մի բուռ հողում, ազգ իմ, ի՞նչպէս անտառուես...

* * *

Ինձ միշտ վարը՝ ծաղկի բոյր է սպասում,
Վարն՝ ամէնուր՝ ինձ համբոյր է սպասում,
Վերեւներում՝ ազգ ու վարից կտրուած՝
Ինձ դաւերի զաղտնաթուրն է սպասում...

* * *

Հայե՛ր, Հայոց վայերի զէմ վայ կացէք,
Միշտ հայ կացէք, մեծ Վարդանին թայ կացէք,
Մասիսի պէս շղթայուէք էլ չորս կողմից՝
Հայակերի երախում էլ հայ կացէք...

* * *

Մրմունջներս ու կանչերս զուր անցան,
Սրտիս լացից անուրջներս կուրացան,
Ինձ չնայող սիրուններին աչքերը
Սրտիս միջով որպէս արնոտ թուր անցան...

* * *

Զոյգ աչքերս օթեւանն են մարդկութեան,
Մէկս տունն է իմ հայ ազգի յաւիտեան,
Միւս աչքս տունն է բոլոր ազգերի, —
Յոնքերիս պէս զոնապան եմ երկու տան:

* * *

Անչեղ եմ ես, ճամբիս ոչ մի չեղ չունեմ,
Դարիս մեղքում մի կաթիլ էլ մեղ չունեմ,
Մեղքի ծովը երկրէ երկիր ման կու գայ, —
Մինչ անմեղս մի ոտի էլ տեղ չունեմ...

* * *

Ես էլ զինի չատ չեմ ըմպել, ով Խայեամ,
Բայց կարծում են ինձ էլ զինու ծով՝ Խայեամ,
Զլինի՞ թէ բամբասանքից հարբում են,
Որ ինձ Խայեամ են յորջորջում, ո՜վ Խայեամ:

(Շարունակելի)

© National Library of Armenia